# ԻՆՉ ՀԱՎԱՏԸ ԿԱՐՈՂ Է ԱՆԵԼ ՔԵԶ ՀԱՄԱՐ

«Հավատ» և «Հավատք» բառերը նույն արմատական բառերն են: Նելսոն Աստվածաշնչյան Բառարանը սահմանում է հավատքը որպես հավատ առ Աստված կամ վստահ վերաբերմունք Աստծո հանդեպ, ներառյալ՝ մեր սեփական կյանքի համար հավատարմ մնանք Իր կամքին: Նելսոնը նաև ասում է, **որ հավատքը Աստծո ճշմարտությանը վստահելն է:**

Հավատն ու հավատքը մի բան չէ, ինչ Դուք կարող եք տեսնել: Դա նման է էլեկտրականության. եթե Ձեր մատը մտցնեք էլեկտրական վարդակի մեջ, հոսանքը չենք տեսնի, բայց կիմանաք, որ այն կա:

Հավատն ու հավատքը նույն մետաղադրամի երկու կողմերն են: Հավատքի համար կա առնվազն չորս հունարեն բառ, և ամենից հաճախ օգտագործվողը ***pistis-ն է,*** որը նշանակում է համոզում:

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ.

### I. ՀԱՎԱՏՔՆ Է ՈՐՈՇՈՒՄ, ԹԵ ԱՍՏՎԱԾ ԻՆՉ ԿԱՐՈՂ Է ԱՆԵԼ ԻՄ ԿՅԱՆՔՈՒՄ:
**FAITH DETERMINES WHAT GOD CAN DO IN MY LIFE.**

*Մատթեոս 9:28 – Երբ տուն հասավ, կույրերը մոտեցան նրան: Հիսուսը նրանց ասաց. «**Հավատո՞ւմ եք,** (**pisteuō**, to think to be true) որ կարող եմ դա անել»: Նրան ասացին. «Այո՛, Տէ՛ր»:*

*Մատթեոս 9:29 – Այդ ժամանակ դիպավ նրանց աչքերին ու ասաց. Թող ըստ ձեր **հավատի** (**pistis,** conviction of the truth of anything, belief) լինի ձեզ:*

***Թերահավատությունը մարդու կյանքի առաջին խոչընդոտն է:***

### II. ՀԱՎԱՏՔԸ ԿԱՐՈՂ Է ԼՈՒԾԵԼ ԱՆՀՆԱՐԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ:
**FAITH CAN SOLVE IMPOSSIBLE PROBLEMS.**

*Մատթեոս 17:20 – Հիսուսը նրանց ասաց. Ձեր թերահավատության պատճառով: Ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք և այս **սարին ասեք**՝ "Այստեղից այնտեղ փոխադրվիր", այն կփոխադրվի: Եվ ձեզ համար անկարելի ոչինչ չի լինի:*

***Հերովդես Մեծը Մասադայում տպավորիչ ամրոց կառուցեց՝ ցուցադրելու իր սեփական ուժը, բայց այսօր մեզ հիշեցվում է, որ եթե մենք մանանեխի հատիկի պես հավատ ունենանք, կարող ենք տեղափոխել այդպիսի սարեր:***

### III. ՀԱՎԱՏՔՆ ԱՂՈԹՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ Է:
**FAITH IS THE KEY TO ANSWERED PRAYER.**

*Մատթեոս 21:22 – Եվ այն ամենը, ինչ աղոթքի մեջ հավատքով խնդրեք, կստանաք:*

*Հակ. 4:3 - 3 Խնդրում էք եւ չէք առնում, որովհետեւ չար կերպով էք խնդրում, որ ձեր ցանկութիւններումը վատնէք:*

### IV. ՀԱՎԱՏՔԸ ՀՐԱՇՔՆԵՐԻ ՀԻՄՔՆ Է:
**FAITH IS THE BASIS FOR MIRACLES.**

*Հովհաննես 14:12 – Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. ով հավատում է ինձ, ինքն էլ նույն գործերը կանի, որ ես եմ անում, և դրանցից էլ ավելի մեծ բաներ կանի, որովհետև ես իմ Հոր մոտ եմ գնում:*

## V. ՀԱՎԱՏՔԻ ՊԱԿԱՍԸ ՄԵՂՔ Է:
**LACK OF FAITH IS SIN.**

*Հռոմեացիս14:23 – Ամեն բան, որ հավատից չէ, մեղք է:*

***Եթե ես ունեմ աթոռ, որի վրա բազմիցս նստել եմ, վստահություն եմ ստեղծել, որ այն կպահի ինձ: Ես հավատ ունեմ այդ աթոռի նկատմամբ: Նմանապես, մենք պետք է բոլոր ժամանակներում հավատք ունենանք առ Քրիստոս:***

## VI. ՀԱՎԱՏՔԸ ԿՅԱՆՔՈՒՄ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ:
**FAITH PRODUCES SUCCESS IN LIVING.**

*Ա Հովհաննես 5:4 – որովհետև ամեն ոք, ով Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին: Սա՛ է այն հաղթությունը, որ աշխարհին հաղթեց, այսինքն՝ <u>մեր հավատը</u>:*

***Մտածեք Աստվածաշնչի մի քանի մեծագույն առաջնորդների մասին:***

- *Նոյը տապանը կառուցեց՝ չտեսնելով անձրևը:*
- *Աբրահամ, «գնա և ԵՍ քեզ ցույց կտամ:»*
- *Մովսեսը Իսրայելին տանում է մի երկիր, որտեղ կաթ ու մեղր է հոսում:*
- *Երիքովի պարիսպներն ընկան այն բանից հետո, երբ իսրայելացիները վեց օր շարունակ շրջեցին քաղաքի պարիսպների շուրջը, իսկ յոթերորդ օրը՝ յոթ անգամ, հետո փողերը հնչեցրին:*
- *Գեդեոնը 300 հոգով կռվեց 100,000-ի դեմ:*

***Այսպիսով, ի՞նչ է Հավատքը: So then what is Faith.***

*Եբրայեցիներին 11:1, 6 - 1 Հավատը հուսացված բաների հաստատումն ու **<u>աներևույթ բաների ապացույցն է</u>**, …6 Բայց առանց հավատի անկարելի է Աստծուն հաճո լինել, որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հավատա, որ նա կա և իրեն փնտրողներին վարձահատույց է լինում:*

## I. ՀԱՎԱՏՔՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ԻՄ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ:
**FAITH IS STRETCHING MY IMAGINATION.**

*Եփեսացիս 3:20 – Բայց նրան, ով մեր մեջ ներգործող զորությամբ կարող է առատությամբ ամեն բանից ավելին անել, քան որ խնդրում ենք ու իմանում:*

## II. ՀԱՎԱՏՔԸ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ Է:
**FAITH IS TAKING THE INITIATIVE.**

*Մար. 5:34 - 34 Նա էլ ասեց նորան. Դուստր, քո հաւատքն ազատեց քեզ, գնա խաղաղութեամբ, եւ քո տանջանքից առողջ եղիր:*

## III. ՀԱՎԱՏՔԸ՝ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳԻ ԵՆԹԱՐԿԵԼՆ Է:
**FAITH IS RISKING A FAILURE.**

*2 Կոր. 5:7 - 7 Որովհետեւ հաւատքով ենք գնում, եւ ոչ թէ երեւոյթով:*

## IV. ՀԱՎԱՏՔԸ ՀՆԱԶԱՆԴՎԵԼՆ Է ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻՆ:
**FAITH IS OBEDIENCE TO GOD’S WORD.**

*Եբրայեցիներին 11:8 – Հավատով Աբրահամը հնազանդվեց, երբ կանչվեց գնալու այն տեղը, որն իբրև ժառանգություն էր ստանալու: Նա ելավ գնաց՝ առանց իմանալու, թե ո՛ւր է գնում:*

*Ծննդոց 15:1-4 – Այս դեպքերից հետո տեսիլքում Տիրոջ խոսքը եղավ Աբրամին՝ ասելով. Մի՛ վախեցիր, Աբրա՛մ, ես քեզ համար վահան եմ, և քո վարձը խիստ շատ է: Աբրամն ասաց. Ո՜վ Ամենակարող Տեր, ի՞նչ ես տալու ինձ, քանի որ ես առանց զավակի եմ մնացել, և իմ տան տիրողն ահա դամասկացի Եղիազարն է: Աբրամը նաև ասաց. Քանի որ ինձ սերունդ չտվեցիր, ուստի իմ ընդոծինն է ինձ ժառանգ լինելու: Եվ ահա Տիրոջ խոսքը եղավ նրան՝ ասելով. Նա քո ժառանգը չի լինի, այլ նա, որ քո մեջքից է դուրս գալու, նա՛ կլինի քո ժառանգը:*

## Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ